Ժ Է.

Իր երկու ծըծին միջին կար կաքաւ, կար կարկնջելով.
Քանի ձեռքս ի նա տարի, նայ ի դէմ գար կարկնջելով:

Ժ Ը.

Երէկ ցորեկով բարով կու տան'ին աղուոր մի ճորով.
Հազար աչք ի հետ լալով, իմըն գետ բերէր վըտակով.
Ասի թէ ի հետ երթամ, լօք առնում պագիկ մըն ճորով.
Պագիկ մըն ճորով առնում ու մէկիկ մըն սրտի կամով:

Ժ Թ.

Քանի՛ ու քանի՛ ասեմ, մի՛ կենար դուն խամ լաթերով–
Գընա՛ ապըրշում հագիր, որ նախշած է ոսկի թելով.
Արե՛կ լուկ առջեւս անցիր, լօք քալէ՛ քալըդ համըրով.
Յայնժամ ինձ աղուոր թըւիս, քան զուռի որթըն խաղողով:

Ի.

Զաշխարհս ես ի ժուռ եկի, ա՛յ հոգեկ, որ այլ չի մընաց.
Ասցի թէ գտնում հանց եար, ա՛յ հոգեկ, որ այլ չէ սիրած.
Եկի հանց եարի մ'առի որ սիրած է 'ւ այլվի թողած:
Զի՞նչ շահ է իմ շատ դատիլս երբ այլոց ի ծոց ես պառկած:

Ի Ա.

Եարիկ մի յինէն գընաց, բիւր հազար ծաղկունք զինքն իլաց.
Չիգիտեմ թ'իր կամաւ գնաց թէ իրենն ի սէր չիպիտաց.
Թղթիկ մըն յետեւէն գնաց որ ամէնն էր հառաչ ու լաց.
Իր մէջն էր պագեր գըրած, ի յեզերն՝ գիրկ, կարօտ ու լաց:

Ի Բ.

Դեռ ամառըն չէր եկած, նայ տըւին ինձ վարդ մի հասած.
Դեռ ի մուրազ չ'ի հասել, նայ առին զան վարդն ի ձեռացս.
Գիտնա՛ս թէ որբուկ եմ ես կամ ի հօրն ու մօրն անիծած.
Զթղթիկս ի ձեռացս առած, զիմ իտֆթարս ի ծուռն ի գըրած:

Ի Գ.

Հընցկուն հեռաւոր էաք զինչ լուսին ու սարդ ի դիմաց:
Եկաք մօտեւոր եղաք զինչ ըզջուրդ ու ձուկըդ հիտրաց.
Աւա՛ղ, թէ կտրեն ըզջուրն, լօք մընայ ի ձուկըն ծարուած,